ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.08.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը: Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. *Դեկանատի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:*
2. *2020- 2021 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:*
3. *Տնտեսագիտության ֆակուլտետի առկա դասապրոցեսի/ գործնական աշխատանքների/ կազմակերպման մասին /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:*

1. Լսեցին. - Դեկանատի կազմի քննարկման և հաստատման մասին/Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց դեկանատի կազմը: Նա առաջարկեց քննարկել և հաստատել:

1. Գ. Ավետիսյան դեկան, խորհրդի նախագահ
2. Ա Ալեքսանյան «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար

3.	Մ. Միքայելյան	«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ
4.	Գ. Հովհաննիսյան	«Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ
5.	Պ. Ասիլբեկյան	ֆակուլտետի արհբյուրոյի նախագահ
6.	Ա. Խոջումյան	ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ
7.	Ի. Վարդանյան	ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

Արտահայտվեցին - Ա. Եգանյանը:

Նա նշեց, որ դեկանատի կազմը կազմվել է տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության համաձայն: Այն խթանելու է ֆակուլտետի աշխանքները:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհուրդը հաստատեց դեկանատի կազմը:

Որոշեցին. - Հաստատել ֆակուլտետի գիտխորհրդի նախագահի կողմից ներկայացված դեկանատի կազմը/ հիմք Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրություն կետ 45 /:

2. Լսեցին . - 2020- 2021 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի քննարկման և հաստատման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց մանդատային հանձնաժողովի կազմը և առաջարկեց քննարկել:

Տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը.

1. Ավետիսյան Գայանե Հրաչիկի - նախագահ
2. Ասիլբեկյան Պավել Նորիկի - քարտուղար
3. Սարիբեկյան Անուշ Աղաջանի -Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար
4. Ա. Խոջումյան -ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ
5. Ի. Վարդանյան -ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ

9/ինը/ կողմ, 1/ մեկ/ ձեռնպահ ձայնով՝ գիտախորհրդի կազմը հաստատեց 2020- 2021 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 10-րդ կետով (երկրորդ պարբերություն) գիտխորհուրդը որոշեց:

Որոշեցին. - Հաստատել 2020- 2021 ուստարվա տնտեսագիտության ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմը:

3.Լսեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի լսարանային դասաժամերի գործնական աշխատանքների/ կազմակերպման մասին /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

3.1. Լսեցին.- Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը ներկայացրեց այն առարկայացանկը, որը քննարկվել էր ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում: Նա փաստեց լսարանում իրականացվող դասընթացի արդյունավետության մասին և ներկայացրեց ֆինանսներ մասնագիտությամբ բոլոր կուրսերում մասնագիտական առարկաների գործնական լսարանային դասաժամերի իրականացման ցանկը: / Հավելված 1/

Արտահայտվեցին.- Հ. Մարգարյանը, Ա. Սարիբեկյանը

Նրանք նշեցին, որ անկախ առարկայի առանձնահատկությունից, նպատակահարմար է ամիսը մեկ անգամ, սահմանված գրաֆիկով, դասախոսները լինեն համալսարանում: Կենդանի շփումը ուսանողների հետ հնարավորություն կտա քննարկել դասընթացին վերաբերող առավել հրատապ հարցերը:

3.2.Լսեցին.- Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ իրենք առաջնորդվել են կարգին համապատասխան: Նա արժեվորեց առկա դասպրոցեսը, սակայն ելնելով հանրապետությունում իրավիճակից, հորդորեց հետևել պարետատան ցուցումներին: Նա ներկայացրեց առարկայցանկը, որն անհրաժեշտ է իրականացնել առկա: Գ. Հովհաննիսյանը նշեց, որ առարկայացանկը քննարկվել է ամբիոնի նիստում: /Հավելված 1/

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը

Նա նշեց, որ դասապրոցեսն անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության բոլոր ցուցումները կատարելով: Դասախոսությունները իրականացնել միայն առցանց, իսկ գործնականանները՝ ելնելով առանձնահատկությունից:

Ութ կողմ և երկու ձեռնպահ ձայնով՝ գիտախորհրդը հաստատեց Տնտեսագիտության ֆակուլտետում լսարանային անցկացվող առարկայացանկը:

Հինք ընդունելով 2020-2021 ուսումնական տարում ԵՊՀ ԻՄ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը սահմանելու մասին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատարի հրամանը / N113§6, ս/թ օգոստոսի 26/՝ գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետում լսարանային դասաժամերի առարկայացանկը:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***